



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 29

#### ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով՝

բյուջեի սեփական եկամուտների հավաքագրմանը ակտիվորեն մասնակցելու համար համայնքապետարանի աշխատակիցներ՝ համայնքի ղեկավարի ժ/պ՝ Հ. Մազմանյանին, համայնքի ղեկավարի օգնական՝ Ա. Տոնոյանին պարգևատրել մեկ ամսվա դրույքաչափով, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Պարսամյանին կես ամսվա դրույքաչափով:

- |                     |  |
|---------------------|--|
| 1. Համլետ Մազմանյան | 260000 (երկու հարյուր վաթսուն հազար) դրամ        |
| 2. Արմեն Տոնոյան    | 120000 (մեկ հարյուր քսան հազար) դրամ             |
| 3. Հրաչյա Պարսամյան | 82500 (ութանասուն երկու հազար հինգ հարյուր) դրամ |

Ընդամենը 462 500(չորս հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.ori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 30-Ա

ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013Թ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24\_Ի N 28-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երրորդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի  
» 24.09.2021թ. թիվ 02/11./32847-2021 գրությունը որոշում եմ.

1. Լեռնավան համայնքի ղեկավարի 2013թ հոկտեմբերի 24-ի «Լեռնավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N28-Ա որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելված 28-րդ կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1 և 9.2 ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝

«9.1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 4-ի N17-Ն հրամանով սահմանված աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը հանրային պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի ներկայանալիս.

9.2) ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը.»

2) Հավելված 33-րդ կետից հետո լրացնել նոր 33,1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝  
«33.1. Աշխատակազմում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական

սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են՝ աշխատանքի ներկայանալիս 28-րդ կետի 9.1 ենթակետի հիման վրա որոշված անձին ներկայացնելու բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020թ օգոստոսի 4-ի N17-Ն հրամանով սահմանված աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը»:

3) Հավելվածի 43-րդ կետից հետո լրացնել նոր 43.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «43.1 մինչև 33,1-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:»

4) Հավելվածի 50-րդ կետից հետո լրացնել 50,1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «50.1 սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտման հիմքով անցկացվող ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին բացատրությունը (զեկուցագիր և այլն) ներկայացվում է գրավոր:»

5) Հավելվածի 52-րդ կետից հետո լրացնել նոր 52.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «52.1) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացվում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին: »

2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման մասին տեղեկացնել աշխատակազմի հանրային պաշտոն գրադեցնող, հանրային ծառայության պաշտոն գրադեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող, կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՀԱՄԼԵՏ ՄԱՂՄԱՆՅԱՆ